

գարէութիւն) եւ բնաւորները (մարգարէ, գիտէ) : Վերջինիս դէմ արտայայտութիւն գեկուցանող մը : Բառերու մէջ ուրիշ տեղ գրել ե (ազետ, նւեր) :

Առաջին մասը լաւ . կը մաղթենք որ այդ «վերջինին դէմ արտայայտութիւն գեկուցանող»ին լեզուն քիմքին կցուի, եւ մարգարէ, գիտէ մնան իրենց ուղիղ ձեւին մէջ :

«Բառերու մէջ ուրիշ տեղ գրել ե» : Պատճառ... Որպէսզի Երեւանի Երեխերքը դիւրութեամբ սորվին ուղիղ գրել :

Յարգելի Յանձնաժողովը գիտնալու է որ ամէն լեզու հիներէն սկսեալ մինչեւ պի'նդ նորերը իրենց ուրոյն՝ որոշ կանոններն ու օրէնքներն ունին, եւ ամէն ոք պէ'տք է հրատակի անոնց : Փրանսացիք բանակ մը Թ ունին, որոնց իւրաքանչիւրը իր առանձին, յատուկ տեղն ունի, եւ ոչ մէկ Փրանսացի կը հատէ՝ կից կը զարնէ ընդունուած օրէնքին եւ սովորութեան : Վասն զի ատոնցմէ մէկուն տեղը խախտելուն՝ գիտէ թէ ամբողջ լեզուին շէնքը կը փլչի :

Մենք ալ ե եւ է ունինք, երկու հատ միասին, որոնք իրենց առանձին օրէնքն ու կրօնքն ունին :

Այս մասին երկարօրէն խօսած եմ «Հայ լեզուի ուղղագրական դասերու մէջ», եւ ուրիշ տեղեր, որով հոս չեմ ուզեր կրկին դառնալ անոնց :

Ե-ի տեղ է, Է-ի տեղ ե գործածելուդ՝ ապականելի լեզուն, լեզուին էական՝ կենսական օրէնքը փլցուցիլ՝ քանգեցիլ... աղէտը չի կրնար աղետ գրուիլ, նուէրը՝ նւեր :

Օրէնքը ահա՝ պարզ, պայծառ, վճիռ . վերջավանկէ առաջ միշտ ե . վերջավանկի մէջ թէ՛ ե, եւ թէ՛ Է :

Եչը անփոփոխ, Է-ն՝ կը փոխուի ի-ի . երբեմն նաեւ ե-ի, կամ երկուքին ալ :

Այս իսկ են օրէնք եւ մարգարէք :

Վերեւ յիշուած գրքիս մէջ դրած եմ բոլոր հայերէն բառերը, որոնք վերջավանկի մէջ ե եւ է ունին :

Այդ ուսուցչապետները աղետ, տեր, տեր, նւեր գրելով ոչ միայն մեծ ոճիր մը կը գործեն լեզուի տեսակէտով, այլ եւ ուղղագրութիւնը յանհունա կը դժուարացնեն : Մենք մեր աշակերտներուն կ'ըսենք . Տղաք, ե գիրը անփոփոխ

է, Է-ն կը փոխուի ի-ի, երբեմն նաեւ ե-ի, քիչ անգամ ալ թէ՛ ե-ի, եւ թէ՛ ի-ի :

Վերջավանկէ առաջ միշտ ե-է (բացի քանի մը չնչին, բայց պատճառաւոր բացատրութիւններէ) . ինչպէս եկեղեցի, գեղեցիկ, փերեւերտեւ, եւն . : Վերջավանկի մէջ կրնայ լլլալ թէ՛ ե, թէ է :

Ըսէք ուրեմն . նուիրել բային արմատն ի՞նչ է .— նուէր .— եչո՞վ թէ էով .— Էով .— ինչո՞ւ .— որովհետեւ ի-ի փոխուեցաւ . եչը անփոփոխ է .— պատուիրե՞լ .— նոյնպէս .— աղիտաւո՞ր .— նոյնպէս .— աղետաւո՞ր .— նոյնպէս, որովհետեւ Է-ն կը փոխուի թէ՛ ե-ի, եւ թէ՛ ի-ի . աղէտաւոր չենք կրնար գրել, որովհետեւ Է գիրը վերջավանկի մէջ միայն գոյութիւն ունի, ու երբ հոլովուի կամ ածանցուի՝ պէտք է փոխուի ի-ի կամ ե-ի :— Գետաբերա՞ն .— Եչով, գետ բառէն, որովհետեւ անփոփոխ մնաց .— գետո՞ւն .— Է-ով՝ գէտ արմատէն .— անպիտա՞ն .— Է-ով՝ պէտ արմատէն .— պետութի՞ւն .— Ե-ով, պէտ բառէն .— պատկերազա՞րդ .— Եչով, պատկեր բառէն .— ստուերակա՞ն, վսմութի՞ւն .— Եչով, ստուեր եւ վսեմ բառերէն .— հանդիպի՞լ .— Է-ով՝ հանդէպ բառէն... եւ այսպէս կրնանք բիրտաւոր օրինակներ շարել իւրաբու ետեւէ : Այս կանոնը մենք մեր աղոց մէկ վայրկեանի մէջ կը սորվեցնենք : Չենք կարծեր որ Երեւանի երեխերքը այնքան թանձրամիտ լլլան որ չկարենան այսքան պարզ կանոն մը ըմբռնել ակընթարթի մէջ, եթէ հա՛յ են :

Ի՞նչ հարկ կը ստիպէ ուրեմն որ այդ ուսուցչապետները այնքան կենսական եւ զմայլելի կանոն մը ոտնակոխ ընեն, ալլանդակեն լեզուն, խառնափնդորեն քերականութիւնը :

Տէր բառը տեք գրեցիք . ապագայ ստուգարան մը ի՞նչ պիտի ըսէ տեսնելով այդ ցուցանքը : Անշուշտ սա՛պէս .

Տէր . բուն ձեւ տիայր, ինչպէս տիկին, տիեզերք (տի, մասնիկ, մեծութիւն՝ շատութիւն ցուցնող . կը դրուի վերջն ալ . ծակտի, մանկտի, եւն .) : Փոփոխմամբ տէր, ինչպէս միայն՝ մէկ : Սեռ . տեառն . (բստ օրինի է կը փոխուի ե-ի . ածանց . տիրական, նաեւ ի-ի) :

Այդ ալլանդակ տեք ցուցանքը նոր անհեթեթութիւն մըն է՝ 1927-ին Երեւանում կայացած Յանձնաժողովէն որոշուած : Հայերը ա-